գրել. ասուած է. — «Եթէ լաւ չկարողանամ խօսել, վատը խո՞ կայ։» Բայց բանը խօսելոյ և գրելոյ վերայ չէ, բանը նորա նիւթի վերայ է։ Ազգը միշտ պահանջում է «էջ, դիւքանոր-ին», «սպղտ-ին», «պապէ- ծնողաց», «պապոս-որ-ոց» ելն։ Բայց ես միշտ խնդրում եմ և պիտի խնդրեմ իմ եղբայրներից առաւել քան զամենեսեան,— «Էջ-ին» և «էջ», որ այս երկու սկզբնական աղբիւրներիցն են բղխում երանութեան և կենդանութեան ջուրը։

ԱՐԱՄ

1-ն յունուարի 1876-ին

Ի Տր. Լոփոս

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԷՐ

Ն. Նախիջեւանցի դերձակ Մեծարգոյ Պ. Պողոս Մերոնեան Մաղաքեանց ի Նը-պաստ Ս. Գէորգեան ճեմարանի Մայր Աթոռոյս «ոռ» և հինգ ռուբլի նուիրած լինելով՝ յատուկ շնորհակալութեամբ կհրատարակեմք ի գիտութիւն մերազնէից։

ՓՈՐՁ ՀԱՆԴԷՍ.

Ինչպէս կանխաւ ծանուցեալ էր, մեր Ազգային լրագրութեան մէջ Ազգային եւ Գրականական ՓՈՐՁ անուն եռամսեայ մի հանդէս եւս յաւելացաւ, որոյ առաջին թիւը շնորհակալութեամբ ընկալանք։

Փորձոյ Խմբագիր - Հրատարակիչն է Մեծապատիւ Պ. Աբգար Յովհաննէսեան՝ եւ ըստ մեծի մասին ազնիւ եւ եռանդուն անձինքներէ բաղկացեալ աջակից օգնականներ ունի։ — Փորձոյ տարեկան բաժանորդագինն է ամենայն տեղ 10 ռուբլի, եւ հրատարակութիւնը տարւոյս Յուլիս ամսէն սկսած է եւ երեք ամիսը մի անգամ ի լոյս պիտի գայ։

Փորձոյ առաջին թիւը կարող է գրական դառնալ՝ որ նա օրինաւոր հայկաբանութեան պիտի հետեւի եւ ըստ բաւականին փորձառու՝ հեռատես եւ ողջամիտ միանգամայն բարենախանձ բովանդակութեամբք պիտի փայլի Հայկական լրագրական ասպարիզին մէջ, հասուն եւ լուրջ գիտողութեամբք եւ աղգօգուտ տեսութեամբք պիտի յաճախէ կարօտ միտքերը մշակել եւ զարգացնել, միանգամայն օտարոտի եւ ցնորական գաղափարներով տոգորուած մոլորելոց գեղեցիկ փորձ տալ՝ գիտնալով որ մեր լրագրութեան պարզած կամ պարզել ջանացած ամեն նպատակ՝ տեսութիւնք եւ աշխատութիւնք Հայոց վիճակի եւ դրութեան համաձայն չափելով եւ կշռելով պիտի արտայայտուին, զգուշանալով միանգամայն՝ զի մեր կարողութենէ վեր եւ մեր Հայոց դրութեան իսպառ անյարմար՝ յանդուգն եւ վտանգաւոր ընթացիք գահավէժ արգասիքներ չծնանին։